«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ Մայիսյան հերոսամարտերը և հայոց եկեղեցին
ԱՌԱՐԿԱ՝ Պատմություն
ՀԵՂԻՆԱԿ՝ Աստղիկ Սարիբեկյան
ՄԱՐԶ՝ Արագածոտն
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ՝ Ապարանի Հ. Ոսկանյանի անվան համար 2 հիմնական դպրոց

Ապարան 2022

Բովանդակություն

Ներածություն …….……..……..…3

Գլուխ I
Սարդարապատի ճակատամարտը և հոգևորականության մասնակցությունը.....5

1.1 Սարդարապատի ճակատամարտը ….....5

1.2 Հոգևորականության մասնակցությունը……...……..……8

Գլուխ II
Բաշ Ապարանի ճակատամարտը և հոգևորականության մասնակցությունը ……11

1.1 Բաշ Ապարանի ճակատամարտը……...……11

1.2 Հոգևորականության մասնակցությունը ……..……..…13

Գլուխ III
Ղարաքիլիսայի ճակատամարտը և հոգևորականության մասնակցությունը…….17

Եզրակացություններ …….……..…20

Օգտագործված գրականության ցանկ …….……22

Ներածություն

Յուրաքանչյուր ժողովրդի պատմություն նրա անցած ուղին է, կենսագրությունն ու հիշողությունը, այն քաղաքացու, հասարակության և պետության ապագա գործունեության հիմքն է: «Հայագիտություն» բնագավառի (որում ներառված է Հայոց պատմություն առարկան) իմացության միջոցով ձևավորվում է ազգային ինքնագիտակցություն ու մտածողություն, պատասխանատու և սեփական տեսակետ ու դիրքորոշումներ ունեցող, կշռադատված որոշումներ կայացնող քաղաքացի[1]:

Պատմություն առարկայի հիմնական իմաստը «անցյալի մասին գիտելիքների» ձեռքբերումն է: Սակայն այդ միայն այդ գիտելիքը դիտարկել որպես վերջնարդյունք չի կարող բավարար լինել: Շատ կարևոր է, որ սովորողը կարողանա քննել պատմությունը, բանավիճել դրա շուրջ, ըմբռնել պատմական կարևոր հասկացությունները, ինչպիսիք են օրինակ «փոփոխությունը» և «պատճառը»[2]: Պատմական գիտելիքի և ընկալման կարևոր մաս է բացատրությունն առ այն, թե ինչու՞ են պատմական տվյալ իրադարձությունները տեղի ունեցել: Մի բան է ծանոթ լինել պատմական շարադրանքին, և բոլորովին այլ բան է դրա իրական ընկալումը, ինչը հնարավոր է այն դեպքում միայն, երբ սովորողները կարողանում են վերլուծել անցյալի շարադրանքը և բացատրել, թե ինչու՞ են իրադարձությունները զարգացել հենց այդ կերպ[3]:

Հայ եկեղեցու և հայ ժողովրդի պատմությունն անբաժան են միմյանցից: Դեպքերի ու իրադարձությունների զարգացման դարավոր շղթայի ուշադիր քննության դեպքում չես հայտնաբերի քիչ թե շատ նշանակալից որևէ դրվագ, որտեղ Հայ Առաքելական Եկեղեցին կանգնած չլինի իր ժողովրդի կողքին: Մտովի թերթելով մեր պատմության հերոսական էջերը՝ օրհասական պահերին հայտնի զորականների ու զորավարների կողքին կտեսնենք հայ հոգևոր գործիչների պայծառ դեմքեր, որոնք մի ձեռքում խաչ, մյուսում սուր բռնած՝ կռվել ու նահատակվել են վասն հայրենյաց ու վասն հավատո: Հայ առաքելական եկեղեցին և իր սպասավորները կանգնած են եղել հայ ժողովրդի ազգային ազատագրական պայքարի ակունքներում, որոնց արմատները հասնում են մինչև Ավարայր:

Այս առումով բացառություն չեն կազմում նաև Մայիսյան հերոսամարտերը, որոնք ձախողեցին հայերին ոչնչացնելու թուրք եղեռնագործների ծրագրերը և դարձան այն հիմքը, որի շնորհիվ հռչակվեց Հայաստանի առաջին հանրապետությունը: Հետևաբար այս թեման առանձնանում է իր կարևորությամբ, չէ՞ որ Հայաստանի երրորդ հանրապետությունը հենց Հայաստանի առաջին հանրապետության իրավահաջորդն է:

Այս դասանյութը ուսումնասիրելիս հիմնական ծրագրային նպատակներն ու խնիրներն են.

- ✓ Ներկայացնել հայոց եկեղեցու և հայ հոգևորականների դերը Մայիսյան հերոսամարտերի կազմակերպման գործում:
- ✓ Նպաստել հայրենասիրություն, քաջություն և ազատասիրություն դաստիարակելուն:

---

[1] https://drive.google.com/file/d/1pdozPEQ_n_YhiU-7UXIbiTjU4lZ_EcG2/view

[2] Գիրք պատմության ուսուցման. Ինչու՞, ինչպե՞ս, Պարադիգմա կրթական հիմնադրամ, 2020, էջ 15-16

[3] Նույն տեղում, էջ 20

✓ Նպաստել սովորողների ճանաչողական գիտելիքների հարստացմանը, ինքնուրույն աշխատելու, համեմատելու, երևույթները գնահատելու կարողություններն ու հմտությունները:

✓ Ամրապնդել սովորողների հետաքրքրությունը սեփական ժողովրդի և եկեղեցու պատմության վերաբերյալ[4]:

✓ Ձևավորել բանիմաց վերաբերմունք ազատություն արժեհամակարգի վերաբերյալ[5]:

Դասանյութը կարևորվում է աշակերտների արժեքային համակարգի ամրապնդման տեսանկյունից, այն նպաստում է, որ աշակերտը ավելի սիրի իր հայրենիքը, ժողովրդին և իր պատմությունը, սիրի Մայր եկեղեցին՝ նրա պատմությունը, ստեղծած արժեքները, լինի հայրենասեր և պատրաստ ծառայելու հայրենիքին: Վերջին կետը կարևոր է նաև ռազմահայրենասիրական դաստիարակության տեսակետից. *դպրոցն այն վայրն է, որտեղ երեխային պետք է հայրենասեր դարձնենք, քանի որ այսօրվա հայրենասեր աշակերտը վաղվա լավ զինվորն է և քաղաքացին:*

[4] Հայոց եկեղեցու պատմություն. ուսուցչի ձեռնարկ /7-9 դասարաններ/, Երևան, 2013:
[5] https://drive.google.com/file/d/1pdozPEQ_n_YhiU-7UXIbiTjU4lZ_EcG2/view

Գլուխ I
ՍԱՐԴԱՐԱՊԱՏԻ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԸ, ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

«Ես միշտ էլ հավատացել եմ իմ ժողովրդի ոգուն:
Ես գիտեմ նրա անցած ճանապարհի դառնությունները:
Ես համոզված եմ նաև, որ ազգն իմ հայոց անարգ թշնամուն
դեռ չի ասել իր վերջին խոսքը, և խոսքն այդ պիտի լինի հաղթական»:
ԳԵՎՈՐԳ Ե ՍՈՒՐԵՆՅԱՆՑ

1918 թ. Մայիսյան հերոսամարտերը մեր պատմության փառապանծ էջերից են: Դրանցով հայ ժողովուրդը նվաճեց ապրելու և հարատևելու իր իրավունքը: Սարդարապատում, Բաշ-Ապարանում և Ղարաքիլիսայում կասեցնելով թուրքական բանակի հարձակումը՝ հայկական կանոնավոր զորքը և աշխարհազորը փրկեցին Արևելյան Հայաստանը վերջնական կործանումից: Այս հերոսամարտերի ժամանակ իրեն փառքով պսակեց նաև հայ հոգևորականությունը՝ իր անմնացորդ մասնակցությունն ունենալով հերոսամարտերի ողջ ընթացքին: Հայ հոգևորականությունը ամենուրեք կանգնած էր ժողովրդի ու հրամանատարության կողքին՝ երբեմն անձամբ կազմակերպելով դիմադրությունը ու գլխավորելով աշխարհազորային ջոկատները:

Արշավելով դեպի Անդրկովկաս՝ թուրքական բանակային առաջին, երկրորդ ու վեցերորդ զորակազմերից ստեղծված «Կարս» զորամիավորումը նպատակ ուներ նվաճելու ամբողջ Արևելյան Հայաստանը, հասնելու Բաքու, Դաղստան, անդրկասպյան երկրներ, Հյուսիսային Իրան՝ իրականություն դարձնելու պանթուրքական ծրագիրը: Սակայն թուրքերի այդ ծրագիրը ձախողվեց՝ հանդիպելով հայ ժողովրդի անկոտրում կամքին ու համառ դիմադրությանը:

1.1 *Սարդարապտի հերոսամարտը*

1918թ. հունվարին, խախտելով Երզնկայում դեկտեմբերին կնքված զինադադարը, հարձակում սկսեցին Անդրկովկասի վրա: 1918թ. ապրիլին թուրքերը արդեն գրավել էին Սարիղամիշը, Բաթումը, Կարսը: Մայիսի 15-ին սկսվեց հարձակումը Ալեքսանդրապոլի ուղղությամբ: Ալեքսանդրապոլի վրա հարձակումը եղավ Զատկի գիշերը, երբ քաղաքի պաշտպանության պատասխանատու գեն. Արեշովը, մյուս բարձրաստիճան հրամանատարների համար հրավերք էր կազմակերպել[6]: Թուրքերն, օգտվելով հարմար առիթից, հեշտությամբ տիրացան քաղաքին: Հայկական սպայության մեղքով հայ զինվորը չկռվեց, և այն պնդումը, թե Էրզրումը առանց լուրջ դիմադրության հանձնելը արևելահայերի այն դիրքորոշման հետևանքն է եղել, թե արևմտահայերը թող Կարինի

[6] Պողոսյան Ս., Պողոսյան Կ., Հայկական հարցի և հայոց ցեղասպանության պատմություն, հտ. Երրորդ, գիրք առաջի, մաս Բ, Երևան, 2004, էջ 22:

համար կռվեն, գլխավոր պատճառ լինել չի կարող[7]: Քաղաքի համար մղվող մարտերի ընթացքում քաղաքում մնաց գնդապետ Բեյ-Մամիկոնյանի կողմից իբրև գնդային զինվորական քահանա հրավիրված Արտակ վրդ. Սմբատյանը[8]:

Ալեքսանդրապոլի անկումից հետո թուրքերի «Կարս» զորախմբի 4-րդ բանակը նպատակ ուներ Ալեքսանդրապոլ-Երևան երկաթգծի ուղղությամբ հարձակում իրականացնել դեպի Անի-Սարդարապատ-Էջմիածին-Երևան[9]: Գլխավոր հարվածային ուժը 36-րդ հետևակային դիվիզիան էր: Մայիսի 21-ին թուրքերը գրավեցին Սարդարապատ գյուղն ու կայարանը՝ անմիջական վտանգ ստեղծելով էջմիածնի ու Երևանի համար, որտեղ կային Եղեռնից մազապուրծ եղած բազմաթիվ արևմտահայեր: Չդիմադրել կնշանակեր թույլ տալ թուրքերին ավարտին հասցնել ցեղասպանության ծրագիրը: Սկսվեց համախմբման ուժեղ շարժում: Արամ Մանուկյանը գեներալ Թովմաս Նազարբեկյանին լիազորեց ստանձնելու հայկական բոլոր զորքերի հրամանատարությունը: Վերջինս էլ գեներալ Մովսես Սիլիկյանին նշանակեց Երևանյան ուղղությունը պաշտպանող զորաջոկատի հրամանատար[10]: Նա էր ապահովում թե՛ Սարդարապատի, թե՛ Բաշ-Ապարանի զորքերի ռազմական, պարենային համալրման կարիքները: Նրա կոչն էր. «Հայեր, շտապե՛ք հայրենիքն ազատելու: Հասել է պահը, երբ յուրաքանչյուր հայ, մոռանալով իր անձնականը, հանուն մեծ նպատակի, հայրենիքի փրկության պիտի գործի դնի իր վերջին ճիգը՝ թշնամուն հարվածելու համար»[11]:

Մայիսի 21-ի լույս 22-ի գիշերը Մոլլաբայազետ /Բամբակաշատ/ գյուղի շրջանում հայ աշխարհազորայինները, Ջհանգիր աղայի եզդիներից բաղկացած 300 հոգանոց ջոկատի հետ փոխհրաձգության մեջ են մտնում թուրքական զորքի աջ թևում առաջ շարժվող բաշիբոզուկների հետ[12]: Մայիսի 22-ի վաղ առավոտյան հայկական ուժերը գնդապետ Դ. Բեկ-Փիրումյանի ընդհանուր հրամանատարությամբ հարձակման են անցնում Քյուրաքյանլու-Քյորփալի-Հայկական Զեյվա-Ղուրդուղուլի /Արմավիր/ գյուղերի բնագծերից և հուժկու գրոհով ոչնչացնում թշնամուն Ղամշլու գյուղի շրջանում[13]: Շարունակելով առաջխաղացումը՝ հայկական ուժերը հետ են գրավում Սարդարապատը:

---

[7] Նույն տեղում:

[8] Կերտող Ս., Հայ հոգևորականության մասնակցությունը XX դարի պատերազմներին և հայ ժողովրդի ազգային ազատագրական շարժումներին, Երևան, 1999, էջ 19:

[9] Հայոց պատմություն, հտ. III, գիրք երկրորդ, Երևան, 2015, էջ 640:

[10] Դանիելյան Է., Մելքոնյան Ա., Հայոց պատմություն, Երևան, 2008, էջ 274:

[11] «Բանբեր Հայաստանի արխիվների», N1, 1969, էջ 161: Հղումը տե՛ս Ս. Պողոսյան, Կ.Պողոսյան, նշվ. աշխ., էջ 39:

[12] Հայոց պատմություն, էջ 643:

[13] Նույն տեղում:

Մայիսի 23-ին հայկական ուժերը հաջողության հասան նաև Զաֆարաբադի ուղղությամբ: Մայիսի 24-ին թուրքական 36-րդ դիվիզիան, համալրում ստանալով, Շնքի փաշայի գլխավորությամբ հարձակում կազմակերպեց Սարդարապատի ուղղությամբ: Սակայն այն ձախողվեց հայկական հրետանու դիպուկ կրակի պատճառով: Թուրքերը մամուլում տարածեցին, թե իբր Անի կայարանի մոտ խորտակվել է զինվորական գնացքաշարը՝ դրանով բացատրելով իրենց պարտությունները:

Մայիսի 25-ին Սիլիկյանի հրամանով Սարդարապատի ջոկատը կենտրոնացավ Արաքս կայարանի մոտ՝ Ղարաբուրուն շարժվելու համար: Նպատակը Արաքս-Ներքին Թալին-Մաստարա-Ալեքսանդրապոլ ուղղությամբ շարժվելն էր: Դա պիտի իրականացներ Պողոս Բեկ-Փիրումյանը[14]:

Մայիսի 26-27-ի գիշերը ձևավորվում է հարվածային գունդ փոխգնդապետ Կարապետ Հասան Փաշայանի ղեկավարությամբ, որը նետվում է հակառակորդի թիկունքը: Մայիսի 27-ին, վաղ առավոտյան, հայկական ուժերը հարձակման են անցնում երկու ուղղությամբ: Ձախ թևում շրջապատված ու աջ թևում ջարդված թուրքերը նահանջում են Արաքս կայարանից: Միայն մայիսի 22-26-ը տեղի ունեցած կռիվների ժամանակ թշնամին կորցրեց 3.5 հազար սպանված՝ հետ մղվելով 50-60 կմ[15]:

Մայիսի 28-ին՝ Ղարաբուրուն-Աշնակ գծով թեժ մարտերից հետո, հայկական ուժերի ճնշման տակ թուրքերը հետ են քաշվում: Զարգացնելով հարձակումները՝ հայկական ուժերը ետ են գրավում Վերին ու Ներքին Թալին, Ղարաբուրուն, Մաստարա բնակավայրերը[16]:

Մայիսի 29-ին թուրքերը գրոհեցին Արագած կայարանի վրա, ծանր մարտեր մղվեցին Շիրվանջուղ գյուղի մոտ: Այդ օրը Սիլիկյանը հանդես եկավ Ալեքսանդրապոլը գրավելու կոչով, սակայն հաջորդ օրը Թ. Նզարբեկյանի հրամանով հարձակումը կանգնեցվեց: Բաթումում մայիսի 26-29-ի վերջնագիրը ընդունելուց հետո հաստատվեց զինադադար[17]:

Մայիսի 22-29-ը տևած Սարդարապատի ճակատամարտն ավարտվեց թուրքերի լիակատար պարտությամբ: Սարդարապատի հաղթանակի գրավականների շարքում Հ. Թուրշյանն իրավամբ նշում է. «Մեկ օրվա ընթացքում հայ ժողովուրդը հիմնովին կերպարանափոխվել էր… Սարդարապատի առաջին հաղթանակը մոգական գավազանի մեկ հրաշագործ զարկով վերացնելով գաղթականի և եռլականի տխուր հակամարտությունը և հաղթանակի հավատով տոգորելով բոլորին, հուսակտոր ժողովրդին դարձրեց միաձույլ և միակամ»[18]:

---

[14] Տե՛ս նույն տեղում, էջ 644-645:
[15] Նույն տեղում, էջ 645:
[16] Նույն տեղում:
[17] Նույն տեղում, էջ 645-646:
[18] Թուրշյան Հ. Սարդարապատի հերոսամարտը, Երևան, 1969, էջ 153:

1.2 Հոգևորականների մասնակցությունը Սարդարապատի հերոսամարտին

Սարդարապատի հերոսամարտի նախօրյակին գեներալ Սիլիկյանը հեռախոսով Ա. Շահխաթունյանին հայտնում է, որ թուրքերը առաջանում են դեպի Սարդարապատ՝ Քարխուն ճակատից, և հանձնարարում Արամ Մանուկյանին ուղարկել Էջմիածին՝ այն ժամանակվա հայոց կաթողիկոս Գևորգ 5-րդին[19] համոզելու հեռանալ Էջմիածնից[20]: Մեկնելով Վաղարշապատ՝ Ա. Մանուկյանը հորդորում է Գևորգ Սուրենյանց կաթողիկոսին հեռանալ Բյուրական, բայց վերջինս պատասխանում է. «Ո՛չ տղերքս, հայոց կաթողիկոսը նահանջող չէ… Ասացեք հայ բանակին, թե ես տեղիցս չեմ շարժվում: Ես չեմ թողում Ս. Էջմիածինը: Եթե մեր զինվորները նրան չեն կարողանում պաշտպանել, և թուրքերը մտնելու են Ս. Էջմիածին, իմ դիակը պիտի գտնեն Ս. Իջման սրբավայրում… ասացե՛ք զինվորներին, որ նրանք պատասխանատու են բոլոր հայերի կյանքի համար»[21]:

Հերոսամարտի օրերին Գևորգ Ե Տփղիսեցու հրամանով նախադեպը չունեցող հրաման է արձակվում. Էջմիածնի հոգևորականությունը պիտի զինվի և ժողովրդի հետ մարտադաշտ դուրս գա: Կազմավորվել էր միայն հոգեւորականներից բաղկացած շուրջ 300 հոգանոց ջոկատ: Հնչեցվում են եկեղեցիների զանգերը Արագածից մինչև Արաքս, Սարդարապատից մինչեւ Սևան:

Գևորգ Ե-ն կոչով դիմում է հայ ժողովրդին՝ ոտքի կանգնել ու պաշտպանել հայրենիքը. «Ա՛զգ հայոց, թուրքը՝ մեր բանական հոտի դարավոր թշնամին, նվաճել է Ալեքսանդրապոլը, շարժվում է դեպի սիրտը մեր երկրի, մեր հավատի, մեր կենսագրության: Գալիս է Արարատյան երկրի վրա: Թուրքը, կոտորած ու ավեր փռելով, գալիս է, և մեր զորապետներն էլ այլ ելք չեն գտնում այդ աղետից, քան հայոց հայրապետին փախուստի մղել: Նրանք ինձ առաջարկում են ոսոխի բերանին թողնել Մայր Աթոռ Ս. Էջմիածինը, մեր սրբարանը, հայ ժողովուրդը, հայրենիքի վերջին կտորը: Առաջարկում են լքել այս բոլորը և

[19] Գևորգ Ե Սուրենյանց Տփղիսեցի /1847-1930թթ./: Մինչ կաթողիկոս ընտրվելը եղել է նախ Արցախի ապա Աստրախանի այնուհետև Վրաստանի թեմի առաջնորդ: 1912թ. նրա նախաձեռնությամբ կազմվել է Հայ աղգային պատվիրակությունը /Պողոս Նուբար փաշայի գլխավորությամբ/, որը պետք է ներկայացներ Հայ դատը Եվրոպայում: Գևորգ Ե-ի մասին առավել մանրամասն տե՛ս Քրիստոնյա Հայաստան հանրագիտարան, Երևան, 2002, էջ 207:

[20] Տե՛ս Ս. Պողոսյան, Կ.Պողոսյան, նշվ. աշխ., էջ 32:

[21] Արամը, մահուան յիսնամեակի առթիւ, Երևան, 1991, էջ 510: Հղումը տե՛ս Հայոց պատմություն, էջ 641:

սեփական կյանքը փրկել Բյուրականում կամ այլ անմատչելի լեռնածերպի վրա: Ո՛չ և ո՛չ: Հազար անգամ ո՛չ: Ես չեմ լքի մեր սուրբ նախնիներից ավանդ մնացած Մայր Աթոռը: Եթե հայոց զինվորությունն ու ինքը՝ հայ ժողովուրդը չի կարող թշնամու առաջխաղացումը կասեցնել, եթե ի զորու չէ փրկելու մեր սրբությունները, ապա ես ինքս սուր կվերցնեմ և կընկնեմ Մայր Տաճարի գավիթում, բայց չեմ հեռանա պապերից ավանդ մնացած Սուրբ աթոռից…

Իսկ եթե եկել է վերջը, ապա այն ինչո՞ւ չընդունենք պատվով ու քաջությամբ և ո՛չ թե ողորմելի ստրուկի պես ոսոխի առաջ սողալով: Մեր պատմության անցյալ դարերը լիքն են քաջությամբ ներկված նահատակների արյամբ: Դրանով չի սպառվել մեր արյունը և ուժը: Դարեր շարունակ հայ ազգն ապրել է ինքնության համար պայքարելով… Դրա համար է, որ զանգվածային կոտորածներով հարուստ մեր կենսագրությունը չի՛ ունեցել և չի՛ ունենա վերջին վերջակետ: Ուրեմն էլ ինչո՞ւ ազգովին չբարձրանանք թշնամու դեմ, որը գալիս է մեր արյան վերջին կաթիլին ծարավի….»[22]:

Կամավորներին առաջնորդողներից էր հայագետ տեր Գարեգին եպիսկոպոս Հովսեփյանը, ով այդ ժամանակ ճեմարանի տեսուչ էր: Վեհափառի հանձնարարությամբ նա մեկնում է Սարդարապատ: Եվ ազդեցիկ ու սթափեցնող ելույթով փորձում ոգեշնչել ընկճված ու հուսահատ զինվորներին. «Հայ ժողովուրդն օրհասական կռիվներ շատ է ունեցել եւ միշտ ելք է գտել ու փրկել իրեն:

Ելքը եղել է անձնազոհ հերոսությունը… Հետ նայեցեք, մեզ մնացել են Երեւանն ու Էջմիածինը… Եթե հերոսության չդիմենք, ամեն ինչ կորչելու է իսպառ, այլեւս չի լինի ո՞չ հայ, ո՞չ հայի հայրենիք…

Հայրենակիցնե՛ր, եղբայրնե՛ր եւ որդինե՛ր, հին դարերում, երբ հայոց զորքը պատրաստվում էր թշնամու դեմ գնալու, նրա հրամանատարները գալիս էին Էջմիածին կաթողիկոսի մոտ՝ նրա աջը համբուրելու եւ օրհնությունն առնելու: Բայց այս անգամ վտանգն այնքան ահավոր է ու մեծ, որ ահա ես եմ Սուրբ Էջմիածնից եկել ձեր բոլորի ձեռքը համբուրելու, որ փրկենք հայրենիքը, փրկենք ձեր պատիվը, հայի պատիվը…»:

Եվ արտասվում է ապագա կաթողիկոսը, արցախցի հայորդին, ում ելույթն, իրոք, շրջադարձային էր: Ականատեսները վկայում են, որ ճակատի մի հատվածում, երբ խուճապ ու փախուստ էր սկսվել, հոգևորականներից մեկը պառկել էր նահանջող զինվորների առաջ ու հայտարարել. **«Ինձ կրնկակոխ արեք, նոր փախեք»**:[23] Վերջինիս կողմից դարաբաղցիներից բաղկացած 5-րդ հայկական գունդը ստացավ «Մահապարտներ» անվանումը: Ուժեղացված շրջակա գյուղերի 500 կամավորներով, որոնց հավաքագրել էին Եզնիկ

[22] Ղանդիլյան Վ. և ուրիշներ, Հայոց եկեղեցու պատմություն (դասագիրք հանրակրթական դպրոցի 9-րդ դասարանի համար), Երևան, 2013, էջ 62-63:

[23] https://old.hayernaysor.am/archives/186 17/03/2013

վարդապետ Ներկարարյանը, Թորոս վարդապետ Հարությունյանը և Հովհաննես վարդապետ Տեր-Միքայելյանը, առաջնորդվելով Գարեգին եպիսկոպոս Հովսեփյանի ու Զավեն եպիսկոպոս Մահտեսի-Բաբայանի կողմից, որոնք գնում էին առջևից՝ ձիերի վրա նստած և խաչը ձեռքներին, գունդը մայիսի 22-ին հարձակվեց թուրքերի վրա Ղամշլուի մատույցներում և պարտության մատնեց թշնամուն[24]: Գարեգին եպիսկոպոսի մասին հետագայում Ս. Վրացյանն ասել է. «Էջմիածնի միաբան գիտնական Գարեգին եպիսկոպոս Հովսեփյանը, իբրև նոր ժամանակների Ղևոնդ Երեց շրջում էր մի մասից մյուսը և իր հրաշունչ ճառերով բարձրացնում զորքերի տրամադրությունը: Կրկնվում էին Վարդանանց պատմական օրերը»[25]:

Սարդարապատի ճակատամարտին մասնակցեցին նաև գյուղական ծխական հովիվներ՝ իրենց գլխավորած աշխարհազորային ջոկատներով, ինչպես օրինակ Կոտայքի Թազա գյուղի Տեր Հովհաննես քահանա Տեր-Հարությունյանը իր և Շահաբ գյուղի 250 հոգանոց ջոկատով, Էջմիածնի Գրամփա գյուղի ծխատեր Տեր Հովհաննես քահանան, Զաֆարապատ գյուղի ծխատեր Տեր Սահակ քահանան[26]: Ռազմաճակատի բոլոր գծերում հայ հոգևորականները կանգնած էին ժողովրդի կողքին:

«Ճակատամարտը նախապատրաստված էր նաև հոգեբանորեն: Ա. Մանուկյանին հաջողվեց հայության շրջանում ձևավորել մթնոլորտ, թե Սարդարապատը լինելու է նոր Ավարայր, հստակ որոշվեց նաև հայ հոգևոր ղեկավարների անելիքները: Պատահական չէր, որ Սիլիկյանի շտաբը տեղավորվեց Էջմիածնում և այն էլ ճեմարանի շենքում, այսինքն՝ Մայր Աթոռի տարածքում, նաև պատահական չէր, որ անմիջապես ձևավորվեց քաղաքական, հոգևոր և ռազմական ղեկավարների մի շտաբ՝ պարտականությունների հստակ բաժանմամբ: Քաղաքական ղեկավարությունը զբաղված էր ռազմաճակատի համալրմամբ ու մատակարարմամբ, ռազմական ղեկավարությունն իրականացնում էր ռազմավարակն պլաններ, իսկ հոգևոր ղեկավարությունը մարտակոչ անում հայությանը՝ ոտքի ելնել ճակատագրական կռվի: Էջմիածնի վանքի զանգերի չդադարող ղողանջը մարտակոչի բարձրագույն եղանակ էր»[27]:

[24] Ս. Կերտող, նշվ. աշխ., էջ 21:
[25] Հայոց եկեղեցու պատմություն, էջ 60:
[26] Նույն տեղում:
[27] Ս. Պողոսյան, Կ. Պողոսյան, նշվ. աշխ., էջ 43:

ԳԼՈՒԽ II
ԲԱՇ ԱՊԱՐԱՆԻ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԸ ԵՎ ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

1.1 *Բաշ Ապարանի հերոսամարտը:*

Թուրքական չորս զորամիավորումներից երեքի ռազմական խնդիրներն անմիջականորեն կապվում էին Բաշ Ապարանի ու Ղարաքիլիսայի հետ:

Կոտրելով հայերի դիմադրությունը՝ թուրքերը շարժվում են դեպի Ղարաքիլիսա, սակայն մայիսի 20-ին, գրավելով Համամլուն, Էսադ փաշան 9-10.000 զորքով փոխում է հարձակման ուղղությունը և շարժվում դեպի Բաշ Ապարան: Նրա նպատակն էր Ապարանով դուրս գալ Աշտարակ-Եղվարդ-Կոտայք գիծը և Քանաքեռի գրավմամբ փակել օղակը, զինաթափել հայկական զորքը Երևանում[28]:

Թուրքերը Համամլուից անարգել առաջ են շարժվում և մայիսի 22-ին հասնում Բաշ Ապարան: Այստեղ կանոնավոր զորք չկար, դիմադրությունը սկսել էին Քյուլուջա գյուղում հավաքված աշխարհազորայինները, որոնք ձևավորել էին պաշտպանական գոտի: Առաջին գիծն ընդգրկում էրՔասախ գետի բարձունքներից մինչև Արագածի լեռնալանջը, երկրորդը՝ Մուլքի գյուղից արևմուտք՝ մինչև Ապարանի բերդը[29]: Մինչև մայիսի 23-ը կռվել են Ապարանի, Մուլքիի Նիգավանի, Մելիքգյուղի, Ղազախի, Վարդենիսի, Քուչակի, Արագածի և այլ գյուղերի աշխարհազորայինները՝ Մեդրակ Ջալալյանի, Արսեն Տեր-Պողոսյանի[30] Դ. Մելիքսեթյանի, Մ. Հովհաննիսյանի ղեկավարությամբ[31]: Հայերի կողքին էին նաև եզդիական աշխարհազորայինները:

Մայիսի 23-ին՝ Սարդարապատի ճակատամարտի թեժ պահին, թուրքական 36-րդ դիվիզիան շարժվեց Բաշ Ապարան: Թուրքերին դիմագրավելու համար Դրոյի ընդհանուր հրամանատարությամբ Բաշ Ապարան ուղարկվեցին գնդապետ Դոլուխանյանի 6-րդ հրաձգային գունդը, գնդապետ Ջալինյանի պարտիզանական 2-րդ հեծյալ գունդը: Դրոյի խնդիրն էր Աշտարակ-Ապարան խճուղու վրա գրոհել թուրքերի վրա և նրանց հետ շպրտել արևմուտք:

Սակայն Դրոն սկզբից համաձայն չէր Սիլիկյանի այս որոշման հետ: Դրոն ծրագրում էր բաշապարանյան ուղղությամբ հարձակվող թշնամուն միառժամանակ կանգնեցնել միայն աշխարհազորային և կամավորական ջոկատների միջոցով, ժամանակ շահել ու թշնամուն վճռական ճակատամարտ տալ Աշտարակի մատույցներում: Այս հաշվարկները հիմնված

[28] Հայոց պատմություն, էջ 646:
[29] Նույն տեղում:
[30] Ռաֆֆու հերոս Խենթի՝ Սամսոն Տեր-Պողոսյանի և առաջին կնոջ՝ Աննա Տեր-Թադևոսյանի որդին է:
[31] Հայոց պատմություն, էջ 646:

էին այն թերի տեղեկատվության վրա, որ իբր Բաշ Ապարանի ուղղությամբ հարձակվող թուրքական ուժերն ընդամենը երկու գումարտակ են, սակայն հետագայում պարզվեց, որ դրանք կազմում են մեկ լիարժեք դիվիզիա[32]: Սակայն Մ. Միլիկյանը համաձայնություն չտվեց այս ծրագրին:

Ապարանում Դրոյին են միանում մեծ թվով կամավորներ: Այս մասին ականատես Միսաք Թոռլաքյանը գրում է. «Անկանոն խումբեր, ոմանք զինյալ, ոմանք կացին ու սուր ձեռքներին, ոմանք ծեր, ոմանք երիտասարդ իրաու ետևե կը մոտենային ու կասեին. «Բարև, Դրո՛ջան, ահա եկանք, հրամայե՛»[33]:

Մայիսի 24-ին կատաղի ճակատամարտ է տեղի ունենում Միրաքի կամրջի մոտ, որտեղ թուրքերը պարտություն կրեցին՝ միառժամանակ դադարեցմելով ակտիվ հարձակողական գործողությունները: Այդ օրը Բաշ Ապարան եկան նաև Գարեգին եպիսկոպոս Հովսեփյանը, բանաստեղծ Հովհաննես Հովհաննիսյանը: Ժողովրդի ոգևորությունն աննախադեպ էր:

Մայիսի 25-ի վաղ առավոտյան հայկական ուժերը Դրոյի գլխավորությամբ հարձակման անցան թուրքական ուժերի դեմ: Դրոն սրընթաց գրոհով հասավ մինչև Ղոնդաղսազ ու գրավեց այն, սակայն հենց հաջորդ օրը շրջափակման մեջ ընկնելու վտանգից ելնելով՝ ստիպված եղավ նահանջել: Միայն Ղոնդաղսազ գյուղի մոտ թուրքերը կորցրին 30 զինվոր և մեկ սպա: Մայիսի 25-26-ի մարտերից հետո հարաբերական դադար հաստատվեց, որի ընթացքում Դրոյի ջոկատը զգալիորեն ուժեղացվեց:

ԲԱՇ – ԱՊԱՐԱՆԻ ՃԱԿԱՏԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐԱԿԱՆ ԿԱԶՄ

Մայիսի 27-ին սկսվեց հայկական զորքերի երկրորդ ուժեղ հարձակումը: Մի քանի ժամյա կատաղի կռիվներից հետո թուրքերը, չդիմանալով կռվի լարվածությանը, նահանջեցին մինչև Բաշ Ապարան-Մուլքի հատվածը: Թշնամին նահանջեց նաև Ղազնաֆարի ճակատից: Օրվա ընթացքում նրանց ձեռնարկած բոլոր գրոհները ապարդյուն անցան[34]:

Մայիսի 28-ի վաղ առավոտյան վերսկսվեց հայերի հարձակումը: Հայերը գրավեցին Հաջիբաղր և Ղարանլուղ գյուղերը, որոնց գրավման ժամանակ ոչնչացվեց թշնամու մեկ գումարտակ: Հյուսիսային ուղղությամբ թուրքերը հետ քաշվեցին դեպի Դավաբոյին լեռ- Միրաք, որի ուղղությամբ ծավալված մարտերում թուրքերը ծանր պարտություն տարան:

Միրաքի կռվում թուրքերը փորձեցին հայերի դեմ հանել շրջակա թուրքաբնակ գյուղերի զինված հրոսակախմբերին, սակայն վերջիններս Սեդրակ Ջալալյանի աշխարհազորայինների կողմից ջախջախվեցին ու հետ շպրտվեցին[35]:

---

[32] Տե՛ս Թադևոսյան Ռ., Դրվագներ հայոց ռազմական պատմությունից. XIX-XX դարեր, Երևան, 2012, էջ 385:
[33] Նույն տեղում, էջ 386:
[34] Տե՛ս նույն տեղում, էջ 388:
[35] Տե՛ս նույն տեղում, էջ 389:

Միրաքի կամրջի մոտ տեղի ունեցած մարտում իր քաջությամբ ու հնարամտությամբ աչքի ընկավ Սարգիս Սարգսյանը: Երբ թուրքերը, 4 «Մաքսիմ» գնդացիրներ բարձած մեկ ուղտ ու մեկ էշի վրա, պատրաստվում էին դրանք առաջնագիծ տանել, հայ աշխարհազորայինը, ոչնչացնելով դրանք ուղեկցող ասկյարներին, թանկարժեք բեռով բեռնավորված ուղտին և էշին քշեց մինչև հայկական դիրքերը[36]:

Բաշ Ապարանի ճակատամարտում աչքի են ընկել նաև չորս եղբայրները՝ Թաթոսը, Հակոբը, Մաթեոսը, Սահակը, որոնք դիրք գրավելով մի բարձր բլրի վրա՝ կասեցրին թուրքերի առաջխաղացումը: Հետագայում այդ բլուրը կոչվեց «Թարգու քռա»՝ նկատի ունենալով Թարգու ազգից չորս եղբայրների սխրանքը[37]: Հատկանշական է որ, «Վերածնունդ» հուշահամալիրը կառուցվեց հենց այս բլրի վրա: Այդ մասին Վ. Պետրոսյանը գրում է. «Հիշում եմ, Ապարան այցելած անվանի ճարտարապետ Ռաֆայել Իսրայելյանը շրջեց ճակատամարտի տեղանքով և, հաշվի առնելով «Թարգու քռա» բարձունքի իշխող դիրքը, որոշեց հենց այդ բլուրի վրա էլ կառուցել հուշարձանը»[38]:

Մայիսի 29-ին ետ մղվեցին թշնամու մի քանի հակագրոհներ՝ վերջնականապես պարտության մատնելով նրանց: Բաթումում վերջնագրի ընդունման հետ կապված ակտիվ ռազմական գործողությունները դադարեցին:

2.2 *Հոգևորականների մասնակցությունը:*

Ինչպես Սարդարապատում, այնպես էլ Բաշ Ապարանի հերոսամարտում իր մասնակցությունն ունեցավ հայ հոգևորականությունը: Բաշ Ապարանի մարտերին մասնակցեցին Փամբ գյուղի ծխատեր Տեր Գևորգ քահանա Հայրապետյանը իր ծխականներից կազմված ջոկատով, Քյուլուջա գյուղի ծխատեր Տեր Հովհաննես ավագ քահանա Տեր-Մինասյանը, Նիգավանի ծխատեր Տեր Տաճատ քահանա Պողոսյանը և այլք:



Տեր Տաճատի հերոսական քայլերի մասին իր «Տոհմապատում» գրքում պատմում է Խաչիկ Տեր-Ռաֆայելյանը. «1918թ. մայիսին Բաշ-Ապարանի ճակատամարտի հերոսներից մեկը Նիգավան գյուղի քահանա Տեր Տաճատն է՝ Սարգիս Խաչատուրի Պողոսյանը: Նա համագյուղացիներից կազմված մահապարտների փոքրաթիվ ջոկատով առաջինն է կրակ բացել թուրքական առաջապահ զինվորների վրա՝ կասեցնելով նրանց առաջխաղացումը դեպի Երևան: Տեր Տաճատին հայտնի էր Շիրակի որոշ գյուղերի թույլ տված սխալը: Նրանք հավատացել էին թուրք փաշաների խոստումներին, զենքը վայր էին դրել ու աղուհացով դիմավորել թուրքին: Շիրակի դաշտավայրում թուրքական հրոսակները կոտորածի առաջին դաժան հարվածը տվել են դիմադրող գյուղերին:

[36] Նույն տեղում, էջ 390:
[37] Պետրոսյան Վ., Նիգ-Ապարան, Երևան, 2011, էջ 151:
[38] Նույն տեղում, էջ 152:

30-ական թվականներին Քյափանակ (Մուսայելյան) գյուղի հովիվ, մեր բարեկամ Պողոս Պողոսյանը պատմում էր. «Գյուղ մտնելուց հետո թուրքերը հավաքեցին գյուղում մնացած ծերերին ու երեխաներին, լցրին մարագը ու այրեցին: Այդ մարագը մինչև վերջերս պահպանվում էի որպես գերեզման»:

Հետո կոտորածի հերթը հասավ աղուհացով դիմավորողներին: Նրանք նույնպես չկարողացան խուսափել թուրք ջարդարարների մսաղացին բաժին դառնալուց: «Մենք աղուհացի փոխարեն գնդակների տարափով կդիմավորենք թշնամուն, -ասում է Տեր Տաճատը, - պետք է առաջնորդվենք Վարդանանց կարգախոսով՝ «Մահն իմացյալ անմահություն է»: Մեր քար ու քոռի մեջ կկասեցնենք թուրքերի առաջխաղացումը, մինչև հասնեն աշխարհազորայինների հիմնական խմբերը»:

Նա ծառայել էր ռուսական բանակում, ծանոթ էր զինատեսակներին և մասամբ տիրապետում էր մարտավարության կանոններին: Տեր Տաճատին հայտնի էր, որ այդ նույն ժամանակ ղողանջում են շրջանի բոլոր եկեղեցիների զանգերը:

Ապարանի շրջկենտրոնում 64-ամյա Տեր Ռաֆայելը Ս. Խաչ եկեղեցում կատարում է Սուրբ պատարագի կարգը, որից հետո շրջանի մարտունակ ամբողջ բնակչությունը դուրս էր գալու թշնամու դեմ:

Առաջինը Տեր Տաճատին օգնության հասան Գյուլուջա (Վարդենիս) գյուղի քահանա Տեր Հովհաննեսը, Դովրի գյուղի քահանա Տեր Գրիգորը, Փարպի գյուղի քահանա Տեր Գևորգը և եզդիների ջոկատները: Նրանցից յուրաքանչյուրը ջոկատում ուներ հարյուրից ավելի զինյալ մարտիկ: Տեղ են հասել նաև աշխարհազորայինների հիմնական խմբերը: Նրանց մեջ քիչ չէին ռուսական բանակում ծառայած նախկին զինվորներ ու հրամանատարներ:

Ապարան գյուղի մեծահարուստ Մելիք Սիրեկանը բացել էր ամբարները, ոչինչ չէր խնայում աշխարհազորայիններին օգնելու համար: Մյուս ունևորները հետևեցին Մելիք Սիրեկանի օրինակին: Կանայք, երեխաներն անգամ օգնում էին դիմադրության մարտիկներին:

Հայտնի է, որ Ապարանի բնակչությունը հիմնականում վերաբնակեցվել է Արևմտյան Հայաստանի Ալաշկերտ, Բայազետ, Մուշ, Էրզրում, Սասուն և այլ գավառներից: Նրանք իրենց մեջ կրում են պապերի հարազատ արյունը, համառ են, դրսևորում են երկաթյա կամք, ունեն մարտնչող ոգի: Արդյունքում, չնայած զգալի կորուստներին (թուրքերինը տասնապատիկից ավելի էին), Ապարանի աշխարհազորայինների պատնեշը հուսալիորեն փակել է թուրք հրոսակների ճանապարհը դեպի Երևան: Որից հետո տեղ հասած ազգային զորամասերը՝ զորավար Դրաստամատ Կանայանի (Դրոյի) հրամանատարությամբ, պատրաստվել են հակահարձակման:

Ըստ Դրոյի՝ 1918թ. մայիսի 28-ը կերտել են շրջանի հերոսները: Մեր համոզմամբ՝ Բաշ-Ապարանի պաշտպանության թեժ օրերին՝ մինչև աշխարհազորայինների օգնության հասնելը, Տեր Տաճատի ջոկատը (40-50 մարդ) մի քանի օր ու գիշեր կանգնեցրել է թուրք հրոսակների ընթացքը դեպի Ապարան-Երևան: Գիշերային հարձակումներից մեկի ժամանակ, լսելով ռուսերեն հրամաններ, որ արձակում էր Տեր Տաճատը, թուրքերը խուճապի են մատնվել, կարծելով կռվում են ռուսական բանակի հետ, դիմել են

փախուստի՝ թողնելով մեծ քանակությամբ զինամթերք, նաև գնդացիր: Իմանալով այդ մասին՝ ճակատամարտի ընդհանուր հրամանատար Դրոն շնորհակալություն է հայտնել Տեր Տաճատին և նրան նվիրել «Մաուզեր» տիպի ատրճանակ: Այդ զենքից Տեր Տաճատը չի բաժանվել մինչև 1931թ. մայիս, մինչև իր նահատակվելը Սաղմոսավանքի ձորի քարայրում: Դանագիրմազցի Ավետիս Վարդանյանը Տեր Տաճատի մասին ասել է. «Մի ձեռքում Քրիստոսի Սուրբ Խաչը, մյուսում՝ սուր, նա մինչև իր նահատակվելը՝ 1931թ., մարտնչել է քրիստոնեական հավատքի ու Հայաստանի անկախ Հանրապետության համար[39]:

Տեղեկանալով թշնամու առաջխաղացման մասին՝ Տեր Հովհաննեսը իսկույն ևեթ գործի է անցնում. շրջանի գյուղերի քահանաների միջոցով եկեղեցիների զանգերը հնչեցնելով՝ տագնապ է բարձրացնում և ժողովրդին ոտքի է հանում՝ զինված դիմադրություն ցույց տալու: Իր ջոկատը զինելուց հետո նա էլ է զինվում «մաուզեր» ատրճանակով, սպայական թրով, «մոսին» հրացանով և առաջ նետվում[40]: Տեր Հովհաննեսը մինչ հոգևորական դառնալը չորս տարի ծառայել էլ ցարական բանակում, ավարտել էր զինվորական դպրոց, ուներ ենթասպայի աստիճան:

Տեր Հովհաննեսի ջոկատը առաջիններից էր, որ Տեր Տաճատի ջոկատի հետ կրակ բացեց թշնամու վրա: Առաջին օրը Տեր Հովհաննեսը թուրքերի գերազանց ճնշման տակ ստիպված եղավ նահանջել:

Երկրորդ օրը Տեր Հովհաննեսը իր ջոկատը տեղավորում է ռազմաճակատի ամենավտագավոր հատվածում՝ կռվելով միայն հրացաններով և նախորդ օրը Տեր Տաճատի կողմից գրոհով վերցրած թշնամու մեկ գնդացրով[41]:

Բաշ Ապարանի ճակատամարտին իր անուրանալի մասնակցությունն է ունեցել նաև Ապարան քաղաքի քահանա տեր Ռաֆայել Տեր-Հարությունյանը: Հենց նա էր, որ հնչեցնում է Ապարանի հնամենի եկեղեցու զանգերը և պայքարի հրավիրում ժողովրդին[42]: Այս օրերին էլ տեր հայրը ծանր վիրավորվում է թուրքերի կրակոցներից: Դա կատարվում է հետևյալ կերպ: 1918թ., երբ թուրքերը մոտեցել էին Ապարանին Տեր Ռաֆայելը, եկեղեցու մեծ զանգը թաքցնելու նպատակով, ժամհար Ավոյի հետ այն կտուրից իջեցնելիս ընկել են կրակոցների տակ, և տեր Ռաֆայելը թիկունքից հրազենային վիրավորում է ստացել[43]: Ապա նա զանգը դրել է կողովի մեջ կողքերը լցրել դարման և թաղել իր օթախի հատակի տակ՝ հողի մեջ[44]:

Հիշատակման է արժանի Արագյուղի հոգևոր հովիվ տեր Գրիգոր քահանա Տեր-Պետրոսյանը: Մայիսի 23-ին տեր Գրիգորը Արսեն աղայի հետ շուրջ 100 հոգանոց աշխարհազորայիններով շարժվում են դեպի Բաշ Ապարան՝ իրենց հետ տանելով երեք սայլ լավ բարձած սննդամթերք և զենքի պաշար[45]:

---

[39] https://www.magaghat.am/%d5%b4%d5%a1%d6%80%d5%bf%d5%b6%d5%b9%d5%b8%d5%b2-%d6%84%d5%a1%d5%b0%d5%a1%d5%b6%d5%a1%d5%b6/

[40] Կետրոդ Ս., նշվ. աշխ., էջ 23-24:

[41] Նույն տեղում:

[42] Թումանյան Լ., Զինվորյալ հոգևորականներ, ՀՀ ԶՈՒ Հոգևոր առաջնորդություն, Երևան, 2017, էջ 112-113

[43] Տեր-Ռաֆայելյան Խ., Տոհմապատում, Երևան, 2004, էջ 37-38

[44] Նույն տեղում, էջ 67

[45] Թումանյան Լ., նշվ. աշխ., էջ 107-108

Բաշ Ապարանի ճակատամարտում իսկապես անուրանալի է հոգևորականության ունեցած դերը: Նրանք ոգեշնչում էին հայկական զորքին, առաջնորդում նրանց մարտի դաշտ, անձամբ մասնակցում ռազմական գործողություններին, առանձին դեպքերում /5 աշխարհազորային ջոկատ/ ղեկավարում աշխարհազորային ջոկատներ:

ԳԼՈՒԽ III
ՂԱՐԱՔԻԼԻՍԱՅԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ և ՀՈԳԵՈՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՄՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

«Ղարաքիլիսայի ճակատամարտը «....բացառիկ ճակատամարտ էր այս պատերազմի պատմության մեջ:
....Ղարաքիլիսայի մոտ հայերը ցույց տվեցին, որ նրանք կարող են աշխարհի լավագույն զինվորները լինել»:

Վեհիբ փաշա,
Կովկասում թուրքական բանակի հրամանատար

Մայիսյան հերոսամարտերի շարքում իր ռազմավարական նշանակությամբ առանձնանում է նաև Ղարաքիլիսայի ճակատամարտը:

Մայիսի 24-ին Վեհիբ փաշայի ընդհանուր հարձակման սկզբունքի համաձայն՝ Լոռի մտած թուրքական զորամասերը թևերից պիտի գրոհեին Ղարաքիլիսայի վրա: Ղարաքիլիսայի ճակատ էին նետվել մեծաքանակ ուժեր՝ առաջին և երկրորդ զորակազմերի 9-րդ և 36-րդ դիվիզիաները[46]:

Դեռևս մայիսի 16ին Թ. Նազարբեկյանը հայկական առաջին դիվիզիայի հրամանատար Արեշյանին հանձնարարել էր կանգնեցնել թուրքերի առաջխաղացումը դեպի Ղարաքիլիսա, սակայն այդ հրամանը չէր կատարվել: Նույն օրը Անդրանիկին տրվել էր Վորոնցովկայում մնալու և Լոռվա տափաստանը պաշտպանելու հրաման[47]: Թուրքերը մայիսի 16-20-ը ակտիվ ռազմական գործողությունների չեն դիմում, ինչը հնարավորություն է տալիս հայերին ամրանալ Ջաջուռի լեռնանցքում: Օգտվելով հայերի այս նահանջից՝ թուրքերը գրավում են Ջաջուռը, Աղբուլաղը, Ղալթաղչին: Մայիսի 22-ին հայկական զորքը գաղթականության հետ նահանջում է Դիլիջան:

Մայիսի 22-ին Անդրանիկը հետ է մղում հակառակորդի երեք գրոհ, գաղթականության հետ հասնում Կուրթան գյուղ, ապա նահանջում Դսեղ: Հայկական զորքի մեջ համընդհանուր հուսալքություն է սկսվում: Այս անորոշ վիճակը տևումէ մինչև մայիսի 23-ը, երբ Դիլիջանում ստացվում է Սարդարապատի առաջին հաղթանակի լուրը:

Մայիսի 24-ին Նազարբեկյանի հրամանով Դիլիջան է գալիս Ղազախի տարածքային գունդը՝ համալրելու Ղարաքիլիսայի քայքայված ջոկատը[48]: Այդ օրը տեղի ունեցած միտինգում բոցաշունչ ելույթ է ունենում Գարեգին Նժդեհը, ով էլ մեծ դերակատարում ունեցավ այս ճակատամարտում: Նժդեհը դիմեց ժողովրդին՝ ասելով. «…Պատմական Գուգարք աշխարհի քաջորդինե՛ր, անտուն, անտիրական գաղթականնե՛ր, եկել է ժամը, որ մենք՝ Հայկ Նահապետի թոռներս, արժանին հատուցենք մեր նենգ ու դավադիր թշնամուն…. Էլ բավ է, հայե՛ր, ցնորք է օտարի հետ կապված հույսը: Մեր հույսը մենք ենք այլևս: Հավատանք միայն մեր ուժին, մեր Աստծուն…. Ուրեմն, հայե՛ր, եկեք միանանք

[46] Հայոց պատմություն, էջ 648:
[47] Նույն տեղում, էջ 648-649:
[48] Թադևոսյան Ռ., նշվ. աշխ., էջ 395:

հանուն սուրբ գործի, հաղթանակ տանենք մահի ու արհավիրքի հանդեպ…..[49]»: Նժդեհից հետո հարթակ է բարձրանում Մեսրոպ եպիսկոպոս Տեր-Մովսիսյանը, որը, օդում ճոճոելով արևի տակ շողացող խաչը, օրհնեց ժողովրդին և կոչ արեց մեկ մարդու նման դուրս գալ ընդդեմ անարգ թշնամու: Մինչ այս դասալիք զինվորներին ոգեշնչող կոչ էր հղել զորավար Ղամազյանը. «Ձեր տունը քանդվի, անխելքնե՛ր, ու՞ր եք գնում, ու՞ր եք փախչում, ձեր փրկությունը միայն կռվի մեջ է: Չլսեցի՞ք, որ թշնամին պարտված է Սարդարապատում, Բաշ Ապարանում, ինչու այստեղ էլ չպիտի պարտվի…»[50]: Նժդեհականք՝ կապիտան Գուրգեն Տեր-Մովսիսյանը, Դարպաս գյուղի քահանա Տեր Կոմիտաս Սարգսյանը, Մեսրոպ եպիսկոպոս Տեր-Մովսիսյանը, զորավար Ղամազյանը կարողացան ժողովրդին համոզել չվախենալ, չհուսահատվել և նետվել կռվի՝ հանուն հայրենիքի փրկության:

Մայիսի 23-ին Դարպաս գյուղի քահանա Տեր Կոմիտաս քահանա Սարգսյանը, փամփշտակալներով գոտևորված ու մինչև ատամները զինված հնչեցնել է տալիս եկեղեցու զանգերը և հավաքելով իր ծխականներին՝ Հաջիղարայի /Լեռնապատ/, Ղշլաղի գյուղացիներին՝ դիմադրություն կազմակերպում[51]:

Մայիսի 25-ին կազմակերպվեց Ղարաքիլիսայի ճակատը: Կենտրոնում գործում էին գնդապետ Ա. Մելիք-Շահնազարյանի հեծյալ ջոկատը, Նժդեհի հեծյանլ գունդը, ընդհանուր հրամանատարը գնդապետ Ղորղանյանն էր: Ձախ թևում կանգնած էր գնդապետ Սամարցյանը, աջ թևում՝ փոխգնդապետ Հալաբյանը:

Առաջինը մարտի նետվեց Նժդեհը. մայիսի 25-ին նա իր 40 հեծյալներով հարձակվեց և կանգնեցրեց առաջացող թուրք 100 հեծյալների ու հետևակի մեծ ուժերը. այսպես սկսվեց Ղարաքիլիսայի հերոսամարտը:

Մայիսի 26-ին Ա. Բեյ-Մամիկոնյանին հաջողվեց Մայմեխի մոտ շրջանցել թուրքերի աջ թևը: Թշնամին փախավ Հաջիղարայից: Ն. Ղորղանյանի միաժամանակյա հարձակման հետևանքով թուրքերից գրավվեց թիվ 750 բարձունքը, ոչնչացվեցին 200 թուրքեր[52]: Այս մարտում հերոսաբար զոհվեց կապիտան Գուրգեն Տեր-Մովսիսյանը, հերոսությամբ աչքի ընկավ շտաբս-կապիտան Ի. Վեքիլյանը: Սակայն մայիսի 27-ին թուրքերը կարողացան հետ գրավել կորցրած դիրքերը: Նպատակ ունենալով լիովին շրջապատել Ղարաքիլիսայի ջոկատը՝ թուրքերը գործի դրեցին իրենց տրամադրության տակ եղած ամբողջ ներուժը և օրվա երկրորդ կեսին անցան վճռական գործողությունների: Օրվա վերջում նրանց հաջողվեց կատաղի մարտում գրավել Գյադա-Մայեխ լեռը՝ հայկական ձախ թևի պաշտպանության բանալին[53]: Ավ. Ահարոնյանը հետագայում գրել է. «Երեք օրերի կռիվներից հետո սա թուրքերի առաջին և վճռական հաջողությունն էր, որ մեր դրությունը դարձնում էր տագնապալի»:

---

[49] Համբարձումյան Ռ., Ղարաքիլիսայի համատարած խուճապը յաղթանակի վերածող ոգին, Երևան, 2005, էջ 28-29:
[50] Նույն տեղում, էջ 26:
[51] Նույն տեղում էջ 30:
[52] Հայոց պատմություն, էջ 650:
[53] Տե՛ս Թադևոսյան Ռ. Նշվ. աշխ., էջ 398

Մայիսի 28-ի վաղ առավոտից վերսկսելով հարձակումը՝ թուրքերը նպատակ ունեին զարգացնել իրենց ձեռք բերած հաջողությունները և դրանք հասցնել ցանկալի վախճանի:

Նրանք գրավեցին Շորադաղ լեռը՝ շրջանցելով հայկական պաշտպանության աջ թևը: Ապա թուրքերը հարձակվեցին կենտրոն՝ Ղշլաղի վրա: Բացի այդ՝ Գյադա-Մայմեխից հասցված ուժեղ հարվածով թուրքերը ընկճեցին հայկական ձախ թևի դիմակայությունը: Ստեղծված ճգնաժամային իրադրությունում Բեյ-Մամիկոնյանը հրաման տվեց նահանջել մինչև Վարդանլու, սակայն Վարդանլուի ճանապարհը փակված էր թշնամու կողմից: Փակ էր նաև Դիլիջան տանող ճանապարհը և Ղորղանյանը ստիպված եղավ նահանջել դեպի Շահանլի կայարան. նրանց հետևից շարժվում էր թուրքական զորքը: Ղորղանյանի ջոկատի մեծ մասի նահանջից հետո երկաթգիծը նույնպես կտրվեց թշնամու կողմից, որով Ղարաքիլիսան ամբողջությամբ ընկավ շրջափակման մեջ[54]:

Շրջափակման մեջ ընկած հայ զինվորներն ու սպաները, 3-4 ժամ տևած մարտերում սպառելով իրենց զինամթերքը, մասամբ զոհվեցին կամ գերի ընկան. երեկոյան Ղարաքիլիսան ընկավ: Հետագա 3 օրերի ընթացքում Ղարաքիլիսան շրջակա գյուղերի հետ միասին դարձավ թուրքական գազանությունների զոհը: Մեծ թվով բնակչության հետ միասին գնդակահարվեցին գերի ընկած զինվորները:

Չնայած անցանկալի վախճանին՝ Ղարաքիլիսայի գոյամարտը բացառիկ նշանակություն ունի հայ ժողովրդի Մայիսյան հերոսամարտերում: Այս ճակատամարտի մասին Վեհիբ փաշան ասել է. «*Առաջին երկու օրերը հայերը ետ էին մղում թուրքերի բոլոր գրոհները, անցնում էին հակահարձակման և միայն փամփուշտների և արկերի վերջանալը ստիպեց դադարեցնել դիմադրությունը և նահանջել… Դա բացառիկ ճակատամարտ էր այս պատերազմի պատմության մեջ: ….Ղարաքիլիսայի մոտ հայերը ցույց տվեցին, որ նրանք կարող են աշխարհի լավագույն զինվորները լինել»:*

[54] Նույն տեղում, էջ 400-401:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ամփոփելով կարող ենք նշել, որ Մայիսյան հերոսամարտերը բախտորոշ նշանակություն ունեցան հայ ժողովրդի կյանքում:

Օտվելով նպաստավոր հանգամանքից՝ մայիսի 15-ին թուրքական զորքերը հանկարծակի հարձակումով գրավեցին Ալեքսանդրապոլը (Գյումրին) և առաջ շարժվեցին երկու հիմնական ուղղություններով: Թուրքական զորքերի մի խմբավորում Ալեքսանդրապոլից շարժվեց դեպի Արարատյան դաշտ՝ Երևանը և Էջմիածինը գրավելու, իսկ մյուսը՝ Ղարաքիլիսա՝ ուղղություն վերցնելով դեպի Բաքու:

Մայիսի 22-ի վաղ առավոտյան եկեղեցու զանգերի ղողանջների ներքո սկսվեց Սարդարապատի պատմական ճակատամարտը: Սարդարապատի զորաջոկատը, որի հրամանատարը գնդապետ Դանիել Բեկ-Փիրումյանն էր, հրետանային նախապատրաստությունից հետո անցավ հակահարձակման: Հայկական զինուժը հուժկու գրոհով հետ վերցրեց թշնամու կողմից մեկ օր առաջ գրված Սարդարապատը: Թուրքերը, մեծ կորուստներ տալով, խուճապահար նահանջեցին մինչև Արաքս կայարանի մոտակա բարձունքները: Իսկ մի քանի օր տևած համառ ու ծանր մարտերից հետո թուրքական 15-հազարանոց զորքը ջախջախվեց և նահանջեց դեպի Գյումրի:

Սարդարապատի ճակատամարտին զրեթե զուգընթաց ահեղ մարտեր մղվեցին նաև Բաշ-Ապարանում: Մայիսի 22-ին թուրքական մի դիվիզիա, գրավելով Սպիտակը, շարժվեց Բաշ-Ապարան՝ նպատակ ունենալով Երևանի վրա գրոհել հյուսիսից, մտնել Արարատյան դաշտ և Սարդարապատի մոտ հայկական զորամասերին հարվածել թիկունքից: Ստեղծվեց հարվածային խումբ: Հայկական զորամասը, Դրոյի հմուտ ղեկավարությամբ, ոչ միայն կասեցրեց թուրքերի առաջընթացը, այլև խիզախ հակագրոհով փախուստի մատնեց թշնամուն: Այդ կռիվներում հայերին օգնում էր Ջահանգիր աղայի քրդական (եզդիական) ջոկատը:

Մայիսի 24-28-ը ահեղ մարտեր տեղի ունեցան Ղարաքիլիսայի մոտ: Երկու կողմերն էլ ունեցան մեծ կորուստներ: Չնայած թշնամին ի վերջո գրավեց Ղարաքիլիսան և շարժվեց առաջ, սակայն այնտեղ նույնպես հայերը ցույց տվեցին հիրավի հերոսական դիմադրություն: Դա խոստովանել է հենց թուրք հրամանատարությունը: Ղարաքիլիսայի կռիվներում աչքի ընկան սպաներ Ա. Բեյ Մամիկոնյանը, Ն. Ղորղանյանը, Գ. Նժդեհը, մարտերում հերոսաբար զոհվեց կապիտան Գ. Տեր-Մովսիսյանը և ուրիշներ:

Այս ամբողջ ընթացքում հայ ժողովրդի կողքին անսասան կանգնած էր հայոց եկեղեցին և հայ հոգևորականները, որոնք թե՛ իրենց ոգեշունչ ճառերով ոգևորում էին զինվորներին, թե անձամբ էին նրանց առաջնորդում թշնամուն ընդառաջ և խաչ և սուր ձեռքներին պայքարում հանուն հայրենիքի:

Այսպիսով՝ Սարդարապատի, Բաշ-Ապարանի և Ղարաքիլիսայի հերոսամարտերում հայ ժողովուրդը կարողացավ թշնամուն արժանի հակահարված տալ և վիժեցնել Արևելյան Հայաստանը զավթելու ու տեղի հայությանը ոչնչացնելու երիտթուրքերի ծրագիրը: Մայիսյան հերոսամարտը ամբողջ հայ ժողովրդի հավաքական ուժի և ազգային միասնության հաղթանակն էր: Ավելին, եղեռն տեսած, կյանքի ու մահվան եզրին կանգնած

հայ ժողովուրդը ոչ միայն պահպանեց իր ֆիզիկական գոյությունը, այլև ստիպեց հակառակորդին հաշվի նստել իր հետ և ճանաչել իր անկախ ապրելու իրավունքը։ Մայիսյան հերոսամարտերը հիմք հանդիսացան Հայաստանի անկախության համար։ Եվ հենց այդ հաղթանակի օրերին հռչակվեց Հայաստանի անկախությունը։ Մայիսյան հերոսամարտը դարձավ հայոց նոր ժամանակների Ավարայրը, որ իր խաղացած դերով ու նշանակությամբ, հիրավի, հայ ժողովրդի պատմության ամենահերոսական դրվագներից է։ Այս դեպքերով, կարելի է ասել, փակվում է հայ ժողովրդի ողբերգական և հերոսական իրադարձություններով հարուստ նոր պատմության շրջանը, և սկսվում նորագույն՝ հայկական պետականությունների պատմության ժամանակաշրջանը։

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

ա/ Գրականություն

1. Գիրք պատմության ուսուցման, ինչու՞, ինչպե՞ս, «Պարադիգմա» կրթական հիմնադրամ, 2020, 296 էջ:
2. Դանիելյան Է., Մելքոնյան Ա., Հայոց պատմություն, Երևան, 2008, 352 էջ:
3. Թադևոսյան Ռ., Դրվագներ հայոց ռազմական պատմությունից. XIX-XX դարեր, Երևան, 2012, 588 էջ:
4. Թումանյան Լ., Զինվորյալ հոգևորականներ, ՀՀ ԶՈՒ Հոգևոր առաջնորդություն, Երևան, 2017, 128 էջ:
5. Թուրշյան Հ. Սարդարապատի հերոսամարտը, Երևան, 1969, 292 էջ:
6. Կերտող Ս., Հայ հոգևորականության մասնակցությունը XX դարի պատերազմներին և հայ ժողովրդի ազգային ազատագրական շարժումներին, Երևան, 1999, 48 էջ:
7. Համբարձումյան Ռ., Ղարաքիլիսայի համատարած խուճապը յաղթանակի վերածող ոգին, Երևան, 2005:
8. Հայոց եկեղեցու պատմություն. ուսուցչի ձեռնարկ /7-9 դասարաններ/, Երևան, 2013:
9. Հայոց պատմություն, հտ. III, գիրք երկրորդ, Երևան, 2015, 760 էջ:
10. Ղանդիլյան Վ. և ուրիշներ, Հայոց եկեղեցու պատմություն (դասագիրք հանրակրթական դպրոցի 9-րդ դասարանի համար), Երևան, 2013, 124 էջ:
11. Պետրոսյան Վ., Նիգ-Ապարան, Երևան, 2011, 1008 էջ:
12. Պողոսյան Ս., Պողոսյան Կ., Հայկական հարցի և հայոց ցեղասպանության պատմություն, հտ. Երրորդ, գիրք առաջի, մաս Բ, Երևան, 2004:
13. Տեր-Ռաֆայելյան Խ., Տոհմապատում, Երևան, 2004, 157 էջ:
14. Քրիստոնյա Հայաստան հանրագիտարան, Երևան, 2002, 1200 էջ:

բ/Էլեկտրոնային կայքեր

1. http://www.magaghat.am/
2. https://old.hayernaysor.am/
3. http://www.encyclopedia.am/
4. https://kznakhimnadram.blogspot.com/p/blog-page_27.html